ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 160 – Ա **11 մարտի 2019 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N 169-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ի մասի և 19-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման N 3 հավելվածի 32-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ կետի 3-րդ, 4-րդ ենթակետերի, 9-րդ, 11-րդ և 17-րդ կետերի պահանջները

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի հունիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովասարի Բախտիբեկ Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2007 թվականի ապրիլի 26-ի N 138-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 169-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ որոշման 1-ին կետում

1) «Պետրոսյան Սիրարփի Ավագի /մանկխորհրդի ներկայացուցիչ/» բառերը փոխարինել «Բաղդասարյան Հայկ /մանկխորհրդի ներկայացուցիչ/-երեք տարի ժամկետով» բառերով.

2) «Պետրոսյան Վրեժ Անուշավանի /մանկխորհրդի ներկայացուցիչ/» բառերը փոխարինել «Վարդանյան Անժելա /մանկխորհրդի ներկայացուցիչ/-երեք տարի ժամկետով» բառերով.

3) «Գևորգյան Ռուդիկ Սուրենի /ծնողխորհրդի ներկայացուցիչ/» բառերը փոխարինել «Վարդանյան Մանուկ /ծնողխորհրդի ներկայացուցիչ/-երեք տարի ժամկետով» բառերով.

4) «Նազարյան Արմինե Գագիկի /ծնողխորհրդի ներկայացուցիչ/» բառերը փոխարինել «Կարապետյան Ռոմիկ /ծնողխորհրդի ներկայացուցիչ/-երեք տարի ժամկետով» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

11.03.2019

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 17104300169

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ